«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՆԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՌԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հասարակագիտություն

Մասնակից՝ Ա. Հարությունյան

Ղեկավար՝ Ա. Սաֆարյան

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հասարակագիտության դասավանդման ընթացքում

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ առաջին. Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը հանրակրթական դպրոցում_____ 4

Գլուխ երկրորդ. Հասարակագիտության դասավանդման ընթացքում արժեհամակարգի ձևավորման ուղիները_____ 7

Եզրակացություններ_____ 8

Գրականության ցանկ_____10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ թեման արդիական է, քանի որ ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից է արժեքային համակարգի ձևավորումը: Հայագիտական առարկաների և հասարակագիտության դասավանդումը չպետք է ինքնանպատակ լինի,այլ դաստիարակի հայրենասեր և ակտիվ քաղաքացի,որն անտարբեր չէ իր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:Ացկացնելով դրանք իր արժեհամակարգի պրիզմայի միջով,ոչ միայն գնահատական է տալիս այս կամ այն երևույթին,այլև ձևավորում է նպատակ իր ողջ կյանքի համար: Ըստ Ս. Ի Օժեովի գիտելիքը հասարակական փորձով ստուգված՝ իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը և դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: Բայց մարդու արժեհամակարգը և աշխարհայացքը միայն նրա ունեցած գիտելիքները չեն, այլ ինչպես ասում է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: Ուստի դպրոցն ու ուցուցիչը այստեղ մեծ անելիք ունեն: Որպես հասարակաիտության ուսուցիչ նպատակ եմ դրել դասը պլանավորելիս՝ որպես դասի նպատակ ձևակերպել նաև որոշակի արժեքների կարևորումը, քննարկումը դրանց շուրջ,իսկ որպես վերջնարդյունք՝ աշակերտների մոտ իրական և անցողիկ արժեքների վերաիմաստավորումը:

1Մ.Մոնտեն «Փորձեր» 2016 էջ 26

2Սերգեյ Իվանովիչ Օժեգով - մարդ և բառարան 1964

Ըստ այդմ հետազոտական աշխատանքում իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները.

ա/ Հետազոտել աշակերտների մոտ առկա արժեհամակարգը,պարզել անցողիկ արժեքների հանդեպ նրանց վերաբերմունքը, խթանել համազգային և համամարդկային արժեքների կարևորումը:

բ/Ուսումնասիրել իրական արժեքների մատուցման մանկավարժական միջոցները և քայլերը, ընտրել թեմաներ համապատասխան արժեքները ներկայացնելու համար:

Համապատասխանաբար հետազոտական աշխատանքը բաժանվում է երկու գլուխների.

Գլուխ առաջին. Աշակերտների արժեամակարգի հետազոտություն

Գլուխ երկրորդ. Հասարակագիտության դասվանդման ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ուղիների մշակում:

Գլուխ առաջին

Իմ առջև դրված խնդիրը լուծելու նպատակով մշակել եմ հարցաշար ավագ դպրոցի տարիքային խբին համապատասխան, և անցկացնել անանուն հարցում բոլոր իմ դասավանդած դասարաններում, աշակերտներից խնդրելով 1-10 բալային համակարգով անկեղծ գնահատել նշած արժեքները.

1. Հայրենիք
2. Ազատություն
3. Ընտանիք
4. Խաղաղություն
5. Ընկերություն
6. Ժողովրդավարություն
7. Հարստություն
8. Իշխանություն
9. Ազգային մշակույթ
10. Ազնվություն
11. Կրթություն
12. Հանդուրժողականություն
13. Բարություն
14. Գեղեցկություն
15. Փառք
16. Իշխանություն
17. Պատասխանատվություն

Խնդրել եմ նշել նաև իրենց համար կարևոր այն արժեքը, որը տեղ չի գտել իմ ցուցակում: Ուսումնասիրելով արդյունքները ստացել եմ հետևյալ պատկերը. /ներկայացնում եմ ինչպես են բաշխվել միավորները տոկոսային հարաբերությամբ/

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1. Հայրենիք	-	-	-	-	6%	6%	14%	18%	12%	44%
2. Ազատություն	-	-	-	-	-	-	4%	12%	22%	62%
3. Ընտանիք	-	-	-	-	-	-	-	-	12%	88%
4. Խաղաղություն	-	-	-	-	-	-	-	-	2%	98%
5. Ընկերություն	-	-	6%	-	-	3%	9%	16%	28%	38%
6.Ժողովրդավարութ.	10%	4%	3%	4%	9%	3%	18%	22%	9%	9%
7Հարստություն	-	2%	-	-	19%	10%	22%	15%	15%	17%
8.Իշխանություն	6%	13%	10 %	6%	9%	16%	6%	9%	6%	19%
9.Ազգային մշակութ	-	-	3%	3%	10%	8%	8%	36%	16%	16%
10.Ազնվություն	-	3%	-	-	-	-	5%	9%	23%	60%
11.Կրթություն	-	-	-	-	3%	-	14%	8%	25%	50%
12.Հանդուրժողականութ		3%			6%	15%	9%	12%	25%	21%
13. Բարություն	3%	-	-	-	15%	6%	12%	28%	18%	18%
14. Գեղեցկություն				3%	9%	9%	22%	9%	13%	35%
15. Փառք		3%		6%	9%	15%	9%	25%	13%	20%
16. Իշխանություն	10%	12%	6%	6%	9%	15%	6%	9%	9%	18%
17.Պատասխանատվութ				3%		6%	13%	15%	22%	41%

Ինչպես երևում է աղյուսակից աշակրտները ամենից ավելի արժեվորել են <<Ընտանիքը>> , <<Խաղաղությունը>> և <<Կրթությունը>>: Երկրորդ տեղում <<Հայրենիքը >>, <<Ազնվությունը>> և<<Ընկերությունն>> են: Իմ ցուցակին նոր արժեք չեն ավելացրել,փոխարենը ավելացրել են նոր միավոր՝Օ: Ինձ շատ մտահոգեց, որ հարցվողների 9%-ը <<հանդուրժողականությանը>>,9%-ը <<ժողովրդավարությանը >> և 3%-ը <<ազային մշակույթին>>, տվել են <<Օ>> միավոր: Այստեղ ես իարկե անելիք ունեմ, ինչին նվիրված է իմ ետազոտական աշխատանքի երկրորդ Գլուխը:

Գլուխ երկրորդ

Վերոնշյալ խնդրահարույց արժեքների՝աշակերտների մոտ վերաիմաստավորման նպատակով առանձնացրել եմ այն թեմաները, որոնք առավել մոտ են դրանց և այդ թեմաների պլանը կազմելիս կմշակեմ հատուկ մարտավարություն ևս մեկ անգամ այդ արժեքները շեշտադրելու համար:Կարևոր է աշակերտին ոչ թե ցույց տալ, որ նա սխալվում է , այլ համոզել դիտարկել խնդիրը այլ տեսանկյունից:Այստեղ արդեն կարևորվում է բազմակարծությունը հանդուրժողականությունը, բոլոր տեսակետները լսելու և քննարկելու կարողությունը:Արժեվորմանը երեխան պետք է հանգի ինքնաբերաբար և ինքնուրույն, այլ ոչ պարտադրաբար, ինչի դեմ նա կըմբոստանա և չի ընդունի: Բազմատեսանկյուն մոտեցումը այնպիսի տերմին է, որը բավականին հաճախ են օգտագործում, բայց ավելի հազվադեպ են սահմանում: Կ. Պետեր Ֆրիցշեն գտնում է, որ դա մի գործընթաց է, «ընկալման ռազմավարություն», որը ենթադրում է, որ մենք մեր սեփական տեսակետին զուգահեռ հաշվի ենք առնում նաև ուրիշի տեսակետը (կամ ուրիշների տեսակետները): Այս գործընթացը նաև ենթադրում է, որ մենք հասկանում ենք, որ մեր սեփական տեսակետը ձևավորվել է մեր սեփական մշակութային համատեքստի ազդեցության տակ, արտացոլում է մեր դիրքորոշումը և մեկնաբանությունն այն մասին, թե ինչ է տեղի

ունեցել և ինչու, թե ինչն է կարևոր և ինչը՝ ոչ, ինչպես նաև կարող է արտացոլել մեր նախապաշարմունքները և կաղապարները: Այս առումով բազմատեսանկյուն մոտեցումը ոչ միայն ռազմավարություն է, այլև նախատրամադրվածություն, այն նշանակում է «պատրաստ լինել և կամենալ իրադրությունը դիտարկել տարբեր Տեսանկյուններից»: Ինչպես գգրում է Վ. Աֆանասևը ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով [2]: Ն. Զեյնալյանը արժեքը դիտում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն:

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել երեք խմբով.

1. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում,

2. արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ,

3. արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք:

---

1. ***Զեյնալյան Ն. Ա.,*** Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, էջ 191

2. ***Афанасев В. Г.,*** Социальная информация и управление

обществом. М.: Политиздат, 1975, 408 с.

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային

որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին:

Դրանք էին՝

●լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

●դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարու

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթականդպրոցիտնօրենիուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ:

2. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը,

«Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,

3. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը

4. Մ. Մոնտեն «Փորձեր» 2016:

5. Սերգեյ Իվանովիչ Օժեգով - <<Մարդ և բառարան>> 1964:

6. ***Զեյնալյան Ն. Ա.,*** Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, էջ 191

7. ***Афанасев В. Г.,*** Социальная информация и управление

обществом. М.: Политиздат, 1975, 408 с.